ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 5 - Ա

10 հունվարի 2019 թ.

«ԳԱՎԱՌԻ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 197-Ն որոշմամբ հաստատված «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության /նշանակման/ մրցույթի կարգ»-ի 7-րդ կետը՝

որոշում եմ՝

1. Հաստատել 2019 թվականի հունվարի 11-ին, ժամը 11^{00}-ին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գավառի պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնող մրցույթային հանձնաժողովի կազմը՝ Նիկոյան Արտաշես (մարզպետի խորհրդական), Զոհրաբյան Արմեն (մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ), Հարությունյան Վանիկ (մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ), Համբարձումյան Համբարձում (մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ), Խաչատրյան Արամ (մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի տեղակալ), Մնացականյան Վարդանուշ (մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի վարիչ), Մարատ Ղուրշուդյան (մարզպետարանի հողաշինարարության և հողօգտագործման բանժնի-մարզային հողային պետական տեսչության վարիչ):

2. Մրցույթային հանձնաժողովի նախագահ նշանակել Վանիկ Հարությունյանին, քարտուղար՝ Վարդանուշ Մնացականյանին:

3. Հանձնաժողովի լիազորությունները դադարեցվում են մրցույթի ավարտից հետո:

ՄԱՐԶՊԵՏ՝

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ